

ՍՄԿԿ XXIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԽԵԴԻՐՆԵՐԸ

Ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԱՐԱՐԶՈՒՄՅԱՆ

ՍՄԿԿ XXIV համագումարի պատգամավոր

ՍՄԿԿ XXIV համագումարը պատմական խոշոր իրադարձություն էր: Ի մի բերելով այն մեծ նվաճումները, որոնց հասել է մեր երկիրը վերջին հնգամյակում և առհասարակ վերջին ժամանակաշրջանում, նա միևնույն ժամանակ ուղիներ մշակեց հետագա զարգացման համար: Համագումարը առաջ քաշեց շատ նոր ու կարևոր խնդիրներ կոմունիստական շինարարության համար, ոգևորեց ամբողջ աշխատավորությանը: XXIV համագումարի օրակարգի հիմնական հարցը ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետվությունն էր, որով համոզեա եկավ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Լ. Ի. Բրեժնևը: Զեկուցումն իր մեջ ամփոփում էր մեր գլխավոր խնդիրները ինչպես արտաքին քաղաքականության ասպարեզում, այնպես էլ երկրի ներքին կյանքում: Ընկ. Լ. Ի. Բրեժնևն ամենայն մանրամասնությամբ լուսաբանեց այդ խնդիրները: Համագումարը լսեց նաև ՍՍՀՄ Միևիստրների սովետի նախագահ ընկ. Ա. Ն. Կոսիգինի զեկուցումը՝ նվիրված 9-րդ հնգամյակի դիրեկտիվներին: Պետք է նշել, որ համագումարն ընթացավ գործնական ոգով: Թե՛ այդ երկու զեկուցումները և թե՛ պատվիրակների ելույթները կրում էին շատ կոնկրետ, գործնական բնույթ: Վստահ, հանգիստ ոճով քննարկվում էին մեր կյանքի կարևորագույն խնդիրները: Այդ զեկուցումներն ու ելույթներն արտահայտեցին մեր կուսակցության և ժողովրդի միասնական կամքը՝ անշեղորեն ընթանալ լենինյան ուղիով:

Ընկ. Լ. Ի. Բրեժնևի զեկուցման զգալի մասը նվիրված էր արտաքին քաղաքականության հարցերին: Այս բնագավառում մենք հասել ենք մեծ հաջողությունների, մեր երկրի հեղինակությունը գնալով աճում է: Ինչ վերաբերում է ներքին քաղաքականության հարցերին, ապա IX հնգամյակի պլանին վերաբերող դիրեկտիվներում ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրների իրագործման ասպարեզում մեծ նշանակություն է տրվում բնակչության բարեկեցությունը բարձրացնելու գործին: Այդ կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն են ստանում արդյունաբերության և գյուղատնտեսության այն ճյուղերը, որոնք անմիջականորեն կապված են ժողովրդի բարեկեցության բարձրացման հետ: Թեթև, սննդի, լայն սպառման առարկաների արդյունաբերության զարգացման տեմպերը նախորդ հնգամյակի համեմատությամբ նախատեսվում է զգալիորեն բարձրացնել: Այս բոլորը պետք է կատարվի տեխնիկական առաջընթացի հիման վրա: Դա նշանակում է, որ միաժամանակ բարձր տեմպերով պետք է շարունակենք զարգանալ ժողովրդական տնտեսության այն ճյուղերը, որոնք ապահովում են տեխնիկական առաջադիմությունը, այսինքն՝ զուգահեռաբար պետք է զարգանան մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, էլեկտրոնիկան և այլն: Համագումարում ընդգծվեց այն հանգամանքը, որ ներկա ժամանակաշրջանում ժողովրդի կյանքում վճռական դեր է խաղում գիտությունը: Դրա համար էլ առաջնակարգ նշանակություն են ստանում գիտության զարգացման, տեխնիկական հեղա-

փոխության իրագործման խնդիրները: Ինչպես ասել է ընկ. Լ. Ի. Բրեժնևը, եթե մեզ հաջողվի գիտա-տեխնիկական հեղափոխության նվաճումները միավորել սոցիալիստական հասարակարգի առավելությունների հետ, այն ժամանակ մենք կկարողանանք բարեհաջող կերպով լուծել մեր առաջ դրված խնդիրները: Սոցիալիստական կարգերը լիովին հնարավորություն են տալիս ավելի արագ իրագործել գիտա-տեխնիկական հեղափոխությունը: Դրա համար մեծ պահանջներ են առաջադրվում գիտության և արդյունաբերության աշխատողներին, որոնք պետք է լարեն իրենց բոլոր ուժերը՝ ապահովելու տեխնիկական առաջընթացը: Խնդիրն այն է, որ այդ ապարեզում մենք պետք է տեխնիկապես զարգացած մի շարք երկրներից առաջ անցնենք, հենվելով այն նոր հիմքերի վրա, որ տալիս է սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը: Ինչպես գիտության, այնպես էլ ժողովրդական տնտեսության աշխատողները պետք է ամեն կերպ ձգտեն ժողովրդական տնտեսության մեջ ներդնել գիտության բոլոր նորագույն նվաճումները:

Ընկ. Լ. Ի. Բրեժնևը մասնավորապես շեշտեց այն միտքը, որ գիտության և տեխնիկայի զարգացումը կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գլխավոր խթանն է: Դրանով էլ պայմանավորված է այն մեծ պատասխանատվությունը, որ այսօր դրվում է մեր ամբողջ երկրի գիտական աշխատողների, հետևաբար և մեր ակադեմիայի աշխատողների վրա:

Ընկ. Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ առաջ քաշվեցին մի շարք կոնկրետ հարցեր՝ կապված գիտության նվաճումներն արտադրության մեջ ներդնելու հրատապ խնդիրների հետ: Նախ և առաջ պահանջվում է ամեն կերպ բարձրացնել մեր գիտական հիմնարկների աշխատանքի արդյունավետությունը: Մյուս կողմից հարկավոր է, որ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ աշխատողներն իրենք նույնպես հետևեն գիտության նորագույն նվաճումներին, ոչ թե խուսափեն, այլ ձգտեն ներդնել դրանք: Դա բարդ պրոցես է և այն շղթան, որով գիտությունն ու տեխնիկան կապվում են ժողովրդական տնտեսության հետ, իր բոլոր օղակներով պետք է ակտիվորեն ներգործի այդ պրոցեսի վրա: Դիտական աշխատողները պետք է ակտիվ դեր կատարեն՝ այսինքն հասնեն նրան, որ իրենց աշխատանքի արդյունքները, ձեռք բերված նվաճումները ներդրվեն ժողովրդական տնտեսության մեջ:

Ընկ. Լ. Ի. Բրեժնևը ընդգծեց նաև բնության պահպանման խնդիրները: Պետք է նկատել, որ մեր պայմաններում, երբ ամեն ինչ պլանաչափ է կատարվում, հնարավոր է ավելի մեծ չափով ապահովել բնության պահպանումը. այն, ինչ բնության մեջ այս կամ այն պատճառով քանդվում է, պետք է համապատասխան ձևով վերականգնել:

Հնգամյա պլանը խոշոր խնդիրներ դրեց Հայաստանի ժողովրդական տնտեսության առջև: Այդ խնդիրները հարաբերաբար ավելի բարդ են, և դրանց լուծումը պահանջում է Հայաստանի ամբողջ աշխատավորության ուժերի ավելի մեծ լարում: Մեր հանրապետությունում այժմ արդյունաբերությունը կազմում է տնտեսության գլխավոր ճյուղը և նոր հնգամյակի ծրագրով նախատեսվում է ավելի մեծ աճ, քան միջին միութենական կամ որևէ այլ հանրապետության միջինը: Այդ նոր խնդրի լուծումը անհնարին է առանց գիտության: Հայաստանի ժողովրդական տնտեսության առջև դրված խնդիրների մասին համագումարում ելույթ ունեցավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Քոչինյանը: Նա առանձնապես շեշտեց այն հանգամանքը, որ ժողովրդական տնտեսության զարգացումը հիմնականում պետք է հենվի գիտության վրա: Այս բոլորից բխում է այն մեծ պատասխանատվությունը, որ դրվում է հայ գիտնա-

կանգնեցին վրա: Մեզ մոտ պետք է շարունակել զարգացնել արդյունաբերության այն բնագավառները, որոնք բնորոշ են մեր համրապետությանը՝ գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, ինչպես նաև շինարարությունը: Նախատեսվող շատ խոշոր կառուցումներ հնարավոր չէ իրականացնել առանց գիտնականների ջանքերի ու օգնության:

Նախ խոսենք արդյունաբերական խոշոր ձեռնարկումների մասին: Հրազդանի կոմբինատը մեր ակադեմիայի աշխատանքի արդյունքն է. այն մեզ մոտ է ծնվել: Դա մի նոր ուղի է Սովետական Հայաստանի բնական ռեսուրսների օգտագործման ասպարեզում և մեծ հեռանկարներ է բացում սեր առջև: Այժմվանից պարզ է՝ այն նյութերը, որ արտադրվելու են այդ կոմբինատում մեծ և բազմապիսի կիրառություն կունենան, և որքան գիտությունն այդ ուղղությամբ շատ աշխատի, որքան դյուրացնի տեխնոլոգիական պրոցեսները և ցույց տա այդ նյութերի, մասնավորապես մետաքսիկատների օգտագործման նոր ասպարեզները, այնքան այդ գործն ավելի հաջող կընթանա: Ես համոզված եմ՝ հենց որ ավարտվի կոմբինատի առաջին հերթի կառուցումը և սկսվի արտադրանքի կանոնավոր թողարկումը, անհրաժեշտ կլինի իսկույն եռապատկել նրա հզորությունը: Բայց այդ կոմբինատի լրիվ ավարտումն ամբողջովին առնչվում է ակադեմիայի գիտական աշխատանքների հետ, ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի լավ աշխատանքի հետ: Վերցնենք մի ուրիշ խնդիր. նոր հնգամյա պլանով նախատեսվում է ավարտել և գործարկել ոսկու արտադրության Ջոդի կոմբինատը: Այդ խնդիրը կարելի է իրագործել ցածր մակարակով՝ սահմանափակվելով միայն ոսկու արտադրությամբ, բայց կարելի է նաև լուծել բարձր մակարդակով, ազդելով տեխնոլոգիական պրոցեսների կազմակերպման վրա և հասնել այն բանին, որ նույն Ջոդի հանքաքարից ստացվի ոչ միայն ոսկի, այլ, ինչպես առաջարկել են մեր երկրաբանները, նաև մի շարք այլ մետաղներ՝ թելուր, զանազան այլ հանքաքարեր, որոնց պարունակությունը այնտեղ բարձր է: Այնպես որ, Ջոդի հանքերի տեխնոլոգիան, մի շարք տեսակետներից, ինչպես և վնասակար նյութերի առաջացման վտանգի տեսակետից, պետք է լինի մեր գիտնականների ուշադրության կենտրոնում:

Վերցնենք ատոմային էլեկտրակայանի կառուցումը, որը պետք է ավարտվի այս հնգամյակի վերջում: Դա շատ մեծ ներդրումների հետ է կապված, մեծ ծախսեր է պահանջում: Ատոմային կայանը շատ մեծ էլեկտրաէներգիա կտա: Բայց եթե այդ կայանն ունենա նաև համապատասխան ռադիացիոն կոնտուր, ապա ատոմային կաթսաներում առաջացող ճառագայթները կարելի կլինի օգտագործել զանազան արդյունաբերական պրոցեսների, այդ թվում քիմիական արդյունաբերության մեջ տարբեր նյութերի որակը փոխելու համար, ինչպես նաև ջրերի մաքրման և այլ ասպարեզներում: Բայց, ցավով պետք է նշեմ, որ մեր քիմիկոսները և էներգետիկներն առայժմ այս խնդրով քիչ են զբաղվում, մինչդեռ ատոմային կայանի կառուցումը չի սպասի: Մեր գիտնականները, տեխնիկական մտավորականությունը մեծ անելիքներ ունեն հանրապետությանն առավելագույն շահույթ, առավելագույն օգուտ տալու գործում: Մեզ մոտ պետք է ավելի զարգանան ռադիոտեխնիկական, էլեկտրոնային, միկրոբիոլոգիական արդյունաբերությունը: Դրանք ժողովրդական տնտեսության այն ասպարեզներն են, որոնք անմիջականորեն կապված են գիտական աշխատանքի արդյունքների հետ, պահանջում են գիտնականների մշտական ուշադրությունը:

Տեխնիկական առաջադիմությունը պահանջում է՝

ա) նոր տեխնոլոգիական պրոցեսների կազմակերպում.

բ) ճոր նյութերի կամ արդեն հայտնի նյութերի ճոր որակի ստեղծում՝ ներառյալ ճոր նյութերի սինթեզը, ինչպես նաև նյութերի ճոր ձևերը, նրանց ոչ միայն քիմիական սինթեզը, այլև ագրեգատային վիճակի համապատասխան փոփոխությունը: մաքուր նյութերի ստացումը: Նոր նյութերի ստեղծումը մեր առջև դրված առաջնահերթ խնդիրներից մեկն է:

գ) այնպիսի ճոր սիստեմների ստեղծում, որոնք ծառայեն ժողովրդական տրնտեսությանը, մարդուն:

Ահա այս բնագավառներում մենք մեծ գործ ունենք կատարելու:

Նույնքան մեծ է նաև հասարակագետների անելիքներն այս ասպարեզում, որովհետև ժամանակակից տեխնոլոգիան միաժամանակ փոխում է և ողջ հասարակական կյանքը: Հասարակագետները պարտավոր են ակտիվորեն մասնակցել այդ գործին:

Նոր տեխնոլոգիայի ստեղծման հարցերով մեզ մոտ կարող են զբաղվել և ընդհանուր ու անօրգանական, և՛ օրգանական քիմիայի ինստիտուտները, և՛ քիմիական ֆիզիկայի լաբորատորիան, որը հույս ունեն, շուտով կդառնա ինստիտուտ, և՛ միկրոբիոլոգիայի, և՛ բիոքիմիայի ինստիտուտները: Մենք ունենք մի շարք այլ ինստիտուտներ, որոնք մեծ անելիքներ ունեն ճոր նյութեր ստեղծելու գործում: Այդ ուղղությամբ արդեն գործնական աշխատանք է կատարվում մուրք օրգանական քիմիայի ինստիտուտում, բայց պետք է սովելի լայն թափ հաղորդել այդ գործին: Մենք աշխատանք կարող է կատարել նաև ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, որը պետք է ընդլայնի արդեն կատարվող աշխատանքները՝ ճոր բյուրեղներ, մաքուր նյութեր ստեղծելու ուղղությամբ, բիոքիմիայի ինստիտուտը, որը մույնպես զբաղվում է մոր նյութեր ստանալու խնդրով. գիտա-հետազոտական հարցերն ավելի սերտորեն պետք է շաղկապել գործնական խնդիրների լուծման հետ:

Ինչ վերաբերում է ճոր սիստեմների ստեղծմանը, ապա այստեղ մեծ անելիքներ ունեն ճշգրիտ գիտություններով զբաղվող գիտնականները և տեխնիկական ինստիտուտները՝ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, մեխանիկայի ինստիտուտը, հաշվողական կենտրոնը, մինչև անգամ Բյուրականի աստղադիտարանը: Մենք գիտակցում ենք, որ ակադեմիայի գիտնականները շատ մեծ պատասխանատվություն են կրում հանրապետության տնտեսական և կուլտուրական առաջընթացի համար: Ի՞նչ կոնկրետ ճանապարհներով մենք պետք է մեր ինստիտուտների աշխատանքները մոտեցնենք արտադրությանը, որո՞նք են այդ ճանապարհները: Ես կարծում եմ, որ ամենից առաջ անհրաժեշտ է բարձրացնել հետազոտությունների գիտական մակարդակը և գիտական աշխատանքի արդյունավետությունը բոլոր գիտահետազոտական ինստիտուտներում: Ճածր մակարդակի վրա գտնվող գիտությունը չի կարող օգնել արտադրությանը և նրա զարգացման համար ճոր ուղիներ ճշել: Ժողովրդական տնտեսության զարգացմանը կարող է օգնել միայն այն գիտությունը, որ գտնվում է բարձր մակարդակի վրա: Դա առաջին խնդիրն է: Այնուհետև անհրաժեշտ է, որ ակադեմիայում աշխատանքի մակարդակի չափանիշը միշտ համարվի այն, թե գործնականում ի՞նչ արդյունք է տալիս տվյալ գիտական հիմնարկը, իրական ինչ նշանակություն ունի նրա կատարած կոնկրետ աշխատանքը: Առաջին հերթին պետք է հաշվի առնել այն արդյունքը և հնարավոր ազդեցությունը, որ կարող է ունենալ գիտական հետազոտությունը գիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության և առհասարակ ժողովրդական տնտեսության զարգացման վրա:

Մենք պետք է ավելի պահանջկոտ լինենք մեր ինստիտուտների նկատմամբ, իսկ ինստիտուտները՝ իրենց բաժինների և առանձին աշխատողների:

Դրա համար անհրաժեշտ է մշակել որոշ կոնկրետ միջոցառումներ: Կարելի է, օրինակ, նշել հետևյալ խնդիրը: Մենք պետք է ամեն կերպ խրախուսենք ինստիտուտների մ առընթեր փորձնական արտադրությունների ստեղծումը: Մեր որոշ ինստիտուտներում գոյություն ունեցող փորձնական արտադրություններն իրենց արդարացրել են: Դրանք շատ քիչ են, բայց այնտեղ, որտեղ դրանք կան, ուղի են հարթում գիտությունից դեպի կյանք: Փորձնական արտադրություն կամ խոշոր փորձարարական տեղակայքեր՝ ահա հնարավոր ճանապարհներից մեկը: Դա շատ կարևոր ճանապարհ է, և եթե մենք օգտագործենք այն, ապա դա մեծ չափով կօգնի գիտությունը ժողովրդական տնտեսության հետ կապելու մեծ խնդրի իրագործմանը: Այդ վերաբերում է ինչպես ֆիզիկա-տեխնիկական, այնպես էլ կենսաբանական, քիմիական, երկրաբանական գիտություններին:

Ինստիտուտների դիրեկտորներից պահանջվում է մեծ համառություն և գործնական ճախաձեռնություն: Որոշ ինստիտուտներում, որտեղ աշխատանքն ավելի թույլ է կազմակերպված և այսպես ասած չի ենթարկվում արտաքին որևէ դրական ազդեցության, դիրեկտորները դիմադրում են դրան: Բայց պետք է աշխատենք հաղթահարել այդ դիմադրությունը և հնգամյակի տարիներին լուծենք գիտությունը արտադրության հետ կապելու առաջնակարգ խնդիրը: Այժմ մեր ակադեմիայում ստեղծվել է մի նոր բաժանմունք՝ ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքը, որը սերտ կապեր պետք է հաստատի արդյունաբերության և նրա մասնաճյուղային ինստիտուտների հետ, հանդիսանա հանրապետության տեխնիկական մտքի կենտրոնը: Թույլ տվեք հուսալ, որ այդ նոր բաժանմունքը կանի ամեն ինչ՝ այդ հույսերն արդարացնելու համար: Ակադեմիայի գիտական աշխատանքը չի կարող չիճական պարսպով ահմամազծվել մյուս գիտա-հետազոտական հիմնարկներից: Ընդհանակառակը, ակադեմիան պետք է ամենասերտ կապերով կապված լինի հանրապետության բոլոր գիտական հիմնարկների հետ: Այդ հիմնարկներն էլ իրենց հերթին պետք է մշտական կապ պահպանեն ակադեմիայի հետ և հանձին նրան գործնականում տեսնեն այն գիտական կենտրոնը, որը կարող է նրանց ուժերը միավորել մյուս գիտա-հետազոտական հիմնարկների հետ և նպաստել խոշորագույն գիտա-տեխնիկական պրոբլեմների լուծմանը: Դրա համար ակադեմիայի ինստիտուտների, նրա բոլոր բաժանմունքների և ճախագահության ամբողջ աշխատանքը պետք է դրվի անհրաժեշտ բարձրության վրա: Գիտության մեջ բոլոր հարցերը լուծվում են կադրերի լավագույն ընտրության միջոցով: Մեր գիտական հիմնարկների ղեկավարների, դիրեկտորների ընտրության հարցն այդ իմաստով շատ կարևոր է, դրանից շատ բան է կախված: Մենք պետք է չվախենանք և երիտասարդ կադրերին ավելի արագ առաջ քաշենք, նրանց ստեղծագործական մեծ ակտիվությունը միացնենք ավագ սերնդի հարուստ փորձին: Այդ դեպքում լավ արդյունքներ կստանանք: Անհրաժեշտության դեպքում պետք է ժամանակին միջամտենք և բարելավենք կադրերի վիճակը: Մինչդեռ, հաճախ, երբ անհրաժեշտ է լինում, ժամանակին չենք միջամտում:

Այսօրվա գիտությունը շատ տեսակետներից տարբերվում է այն գիտությունից, որ գոյություն ուներ, ասենք, իմ երիտասարդ ժամանակ: Գիտությունն այժմ հագեցված է էքսպերիմենտալ գիտա-հետազոտական նոր տեխնիկայով, որին պետք է տիրապետեն մեր կադրերը: Այս առթիվ ուզում եմ մի քանի խնդիրներ առաջ քաշել: Չափազանց կարևոր է ինստիտուտները հագեցնել ժամանակակից սարքավորումներով: Այդպիսի սարքավորում շատ դեպքերում մենք ունենք, ձեռք ենք բերել: Բայց ամեն տեղ չէ, որ այդ սարքավորումը խելացիորեն ծառայեցնում են հիմնական խըն-

դիրների լուծմանը: Երբեմն արժեքավոր սարքավորումը օգտագործման մի քանի անհաջող փորձերից հետո մի կողմ են դնում: Մի շարք ինստիտուտներում կադրերը տիրապետում են ժամանակակից գիտական տեխնիկային, բայց կան ինստիտուտներ, որտեղ նորագույն սարքավորումները վատ են օգտագործվում: Որոշ դեպքերում դա բացատրվում է դիրեկտորի ոչ նախաձեռնող լինելով, այլ դեպքերում դրա պատճառը համապատասխան որակյալ մասնագետների բացակայությունն է: Մենք պետք է ուսումնասիրենք, պարզենք այն բոլոր պատճառները, որոնք խոչընդոտում են նոր տեխնիկայի ներդրմանը:

Կան ինստիտուտներ, որտեղ հաջողությամբ են օգտագործում էլեկտրոնային միկրոսկոպները, բայց որոշ տեղերում դրանք շատ քիչ են օգտագործվում: Ցավոք սրտի, մեր էքսպերիմենտալ ինստիտուտներում ինքնընտանցյալ վերացավ լաբորանտների դասը. նրանց աշխատավարձը բարձր չէր և քչերն էին գալիս այդ աշխատանքին: Մեզ համար դա մեծ հարված էր: Պետք է հասնել նրան, որ լաբորատորիաներում սարքավորումները միշտ լինեն պատրաստ վիճակում և տեղին օգտագործվեն: Դրա համար անհրաժեշտ են համապատասխան, գործին տեղյակ կադրեր, որոնք կարողանան հմտությամբ ու ուսցիոնալ կերպով օգտագործել թանկարժեք սարքավորումները: Հեռադիտակը համապատասխան վիճակում պահելու և օգտագործելու համար անհրաժեշտ են գիտակ ինժեներներ, գիտական աշխատողներ: Ամեն կերպ պետք է ապահովել լաբորատորիաների, ամբողջ սարքավորման կանոնավոր աշխատանքը: Դա շատ կարևոր է: Երբ լաբորատորիաները սխառեմատիկաբար չեն զբաղվում էքսպերիմենտալ աշխատանքներով, դա բացասաբար է ազդում գիտա-հետազոտական աշխատանքի վերջնական արդյունքի վրա: Բայց այստեղ կա մի ուրիշ հարց ևս, որին նույնպես պետք է ուշադրություն դարձնել և մեծ աշխատանք կատարել այդ ուղղությամբ: Դա էքսպերիմենտալ աշխատանքների ավտոմատացման հարցն է: Այն չափումները, որոնք կատարվում են մասսայաբար, պետք է ավտոմատացվեն: Այդպիսի հնարավորություններ մենք ունենք: Այսօրվա հաշվողական տեխնիկան կարող է մուտք գործել ամենուր: Հայաստանում կարելի է այդ խնդիրը հեշտ լուծել, եթե չխոսենք այնպիսի մեծ հաշվիչ մեքենաների մասին, որ կան ֆիզիկայի ինստիտուտում: Ըստ որում, մեր երկրում արտադրվում են շատ ավելի մեծ հաշվողական մեքենաներ և բավարար չափով տրամադրվում են Հայաստանին: Ինչպես տեսնում ենք, առաջանում են շատ խնդիրներ, որոնք պետք է կարևոր տեղ գրավեն ակադեմիայի նախագահության և բաժանմունքների աշխատանքներում:

Մի քանի խոսք հասարակական գիտությունների բաժանմունքի մասին: Գնալով մեծանում են պահանջները հասարակական գիտությունների նկատմամբ, և կարող ենք ուրախությամբ նշել, որ մի շարք ինստիտուտներ՝ տնտեսագիտության, փիլիսոփայության և այլն, կարող են մեծ գործ կատարել այդ խնդիրների լուծման գործում: Իրոք, մեր հասարակությունում գիտա-տեխնիկական հեղափոխության շնորհիվ արագ փոփոխություններ են կատարվում: Տեղի են ունենում չափազանց բարդ պրոցեսներ, բայց մարդկային գիտակցությունը և միտքը չեն կարողանում այդքան արագ յուրացնել և հասկանալ տեխնիկական արագ փոփոխությունների շնորհիվ կատարվող տեղաշարժերը: Կյանքը պետք է հարմարվի նոր պայմաններին: Առաջացող տնտեսական-սոցիոլոգիական նոր պրոբլեմները պետք է գիտական մեկնաբանում ըստանան: Մեր շուրջը փոխվում է նաև միջազգային իրադրությունը: Այդ ամենը լուրջ խնդիրներ են առաջադրում հասարակագիտական ինստիտուտներին: Ակադեմիան կունենա նաև արևելագիտության ինստիտուտ, որը մեծ անելիքներ ունի այս հարցե-

րում: Ենթ չենք ապրում անօդ տարածության սեջ, այլ շրջապատված ենք հարևան, արևելյան երկրներով, և մեր դերը այս իրադրության մեջ պայմանավորված է նաև այդ հարևանների գոյությամբ: Դա պետք է հաշվի առնել:

Եր հանրապետության գործերը շատ լավ են գնում, զարգացման ոճն արագ է, տեմպերը բարձր են, կատարվում է հսկայական շինարարություն: Հայկական ՍՍՀ-ն առաջավոր սովետական հանրապետություն է, բայց պահանջներն ավելի մեծ են և առանց գիտության, առանց ամեն մի գիտական աշխատողի լավ աշխատանքի անհնարին է առաջընթաց ապրել: Բոլոր գիտաշխատողների, գիտա-հետազոտական հիմնարկների խնդիրն է իրենց ուժերի առավելագույն լարումով օգնել կուսակցությանը և մեր ժողովրդին՝ կատարելու ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական առաջադրանքները: